



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՈՐՈՇՈՒՄ**

-- ----- 2018 թվականի №---Ն
ք. Երևան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի №273Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՁ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի հոկտեմբերի 5-ի «Էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի ապրիլի 7-ի №45Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №273Ն որոշման 1-ին կետով սահմանված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրի օրինակելի ձևում (այսուհետ՝ Պայմանագիր) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը.

1) Պայմանագրի 1-ին կետի 1-ին և 7-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) Առևտրային կանոններ՝

Հանձնաժողովի կողմից հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրա-էներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոններ, »,

«7) Հաշվարկային տարի՝

Ժամանակահատված, որի գործողությունն սկսվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից և ավարտվում նույն տարվա դեկտեմբերի 31-ին ,».

- 2) Պայմանագրի 1-ին կետի 3-րդ ենթակետում «բայց ոչ ավելի, քան 150 կիլովատտը» բառերից հետո լրացնել «, իսկ արևային էներգիայի կիրառմամբ արտադրողների դեպքում մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը՝ մինչև 500 կիլովատտը» բառերը.
- 3) Պայմանագրում «Հատուցման կարգ» բառերը և դրա բոլոր հոլովածները փոխարինել «Առևտրային կանոններ» բառերով՝ համապատասխան հոլովածներով.
- 4) Պայմանագրի №2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը վերակնքել ինքնավար էներգաարտադրողների հետ կնքված էլեկտրական էներգիայի մատակարարման և հատուցման (ինքնավար էներգաարտադրող-բաշխող) պայմանագրերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, և նրա գործողությունը տարածվում է 2018 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
----- 2018թ.

Հավելված

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2018 թվականի -----ի N----Ն որոշման

«Հավելված N2

Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2016 վականի հոկտեմբերի 5-ի N273Ն որոշմամբ
սահմանված պայմանագրի օրինակելի ձևի

Ա Կ Տ

ՀԱՏՈՒՑՄԱՆ (ՎՃԱՐՄԱՆ) ԵՆԹԱԿԱ ԷԼԵԿՏՐՈՎԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինքնավար էներգաարտադրող _____

Բաշխող _____

Հաշվարկային ժամանակահատված _____ 20__ թ. մինչև _____ 20__ թ.

Հաշվարկային տարվա ընթացքում՝

- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Բաշխողի կողմից Ինքնավար էներգաարտադրողին ցերեկային սակագնով մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ($F_{ցւի}$)՝ _____ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Ինքնավար էներգաարտադրողի կողմից ցերեկային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում Բաշխողին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ($F_{ցւի}$)՝ _____ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Բաշխողի կողմից Ինքնավար էներգաարտադրողին գիշերային սակագնով մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ($F_{գւի}$)՝ _____ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում Ինքնավար էներգաարտադրողի կողմից գիշերային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում Բաշխողին մատակարարված էլեկտրական էներգիայի քանակը ($F_{գւի}$)՝ _____ կՎտժ,

- (i-1)-րդ Հաշվարկային ժամանակահատվածում ցերեկային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ($E_{\psi g(i-1)}$)՝ _____ կՎտժ,
- (i-1)-րդ Հաշվարկային ժամանակահատվածում գիշերային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ($E_{\psi q(i-1)}$)՝ _____ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում ցերեկային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ($E_{\psi g(i)}$)՝ _____ կՎտժ,
- i-րդ Հաշվարկային ժամանակահատվածում գիշերային սակագնի համար նախատեսված ժամանակահատվածում էլեկտրական էներգիայի հաշվեկշռային հաշվարկի արդյունքը ($E_{\psi q(i)}$)՝ _____ կՎտժ,
- Ինքնավար էներգաարտադրողի կողմից արտադրված էլեկտրական էներգիայի քանակը (E_{ω})՝ _____ կՎտժ,
- Բաշխողի և Ինքնավար էներգաարտադրողի միջև հաշվարկային տարվա ընթացքում ցերեկային ՎԷ փոխհոսքերի տարբերությունը (E_g)՝ _____ կՎտժ,
- Բաշխողի և Ինքնավար էներգաարտադրողի միջև հաշվարկային տարվա ընթացքում գիշերային ՎԷ փոխհոսքերի տարբերությունը (E_q)՝ _____ կՎտժ,
- Բաշխողի և Ինքնավար էներգաարտադրողի միջև հաշվարկային տարվա ընթացքում ՎԷ փոխհոսքերի տարբերությունը (E_{ω}), ($E_{\omega} = E_g + E_q$)՝ _____ կՎտժ,
- Հաշվարկային տարվա Հաշվարկային ժամանակահատվածներում « $E_{\psi g}$ » դրական մեծությունների հանրագումարը ($E_{\psi g}$)՝ _____ կՎտժ,
- Հաշվարկային տարվա Հաշվարկային ժամանակահատվածներում « $E_{\psi q}$ » դրական մեծությունների հանրագումարը ($E_{\psi q}$)՝ _____ կՎտժ:

1. Սույն ակտում լրացվող « E_{ω} » մեծության արտացոլումը կրում է զուտ տեղեկատվական բնույթ և չի մասնակցում հատուցման հարաբերություններին:
2. Սույն ակտում « E_g », « E_q », « E_{ω} », « $E_{\psi g}$ » և « $E_{\psi q}$ » մեծությունները լրացվում են տարեկան մեկ անգամ՝ տարեկան արդյունքներով:

Հիմքը _____

Ինքնավար էներգաէներգաարտադրող

Բաշխող

(ստորագրություն, անուն, ազգանուն: Իրավաբանական անձի դեպքում՝ պաշտոն)

(պաշտոն, ստորագրություն, անուն, ազգանուն)

_____ 20 ____ թվական

_____ 20 ____ թվական

Կ.Տ.
(առկայության դեպքում)

Կ.Տ.
(առկայության դեպքում)»